

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

17.11.2019



Մի րեւի՝ ուսանողներ

Շնորհավորում եմ այսօր նշվող Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ:

Մաղթում եմ երիտասարդական վառ երազանքների, նպատակների, սպասումների իրականացում, գեղեցիկ ու խոստումնալից ապագա, հաջողություններ՝ յուրաքանչյուրիդ ընտրած մասնագիտության մեջ կայանալու ճանապարհին:

Ցանկանում եմ, որ լինեք հաստատակամ ու չընկրկեք դժվարություններից, իսկ ձեր պայծառ միտքը, ուսանողական եռանդն ու նախաձեռնությունները, նորարար ու թարմ գաղափարները օգնեն մեզ վաղվա Հայաստանը կառուցելու գործում:

Առանձնակի ջերմությամբ շնորհավորում եմ մեր մարզում ու նրանից դուրս սովորող սյունեցի ուսանողներին ու կոչ անում՝ ստացած գիտելիքներն անպայման կիրառել Սյունիքում՝ այստեղ կառուցելով ձեր ապագան, շարունակելով այն զարգացնելու աշխատանքը:

Վայելէ՛ք ուսումնառության հետաքրքիր եւ անմոռանալի տարիներն ու ձգտեք քաղել առավելագույնը՝ հետագա մասնագիտական հմտությունների հիմքը դնելու, ամեն օր նոր գիտելիքների ամբարման, միմյանց հետ փորձի փոխանակման ու հարազատ կրթօջախում սկիզբ առած ընկերությունը շարունակելու համար: